ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

29 Հոկտեմբերի 2020թ. ք. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի

անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 22/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Լոռի ՖԱ» (ԲԽ015) խաղի մասին

   Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ակումբի մարզական տնօրեն Արսեն Մարգարյանը առաջին խաղակեսի ավարտից հետո՝ թունել մուտք գործելուց առաջ, վիրավորական արտահայտություններ թույլ տվեց մրցավարական անձնակազմի հասցեին, ինչի արդյունքում տեղի ունեցավ միջադեպ նրա և 4-րդ պաշտոնյայի միջև:

2. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղին «ՈՒրարտու» թիմի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Գրիգորյանի (N 36106) հեռացման մասին (մրցակից թիմի հասցեին անհարգալից արտահայտություններ հնչեցնելու համար):

3. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղին «Գանձասար-Կապան» թիմի մարզիչ Մարտիկ Մկրտումյանի (N 1973) հեռացման մասին (մրցակից թիմի գլխավոր մարզչի հասցեին հայհոյանք հնչեցնելու համար):

4. 26/10/20թ. «Լոռի ՖԱ»-«Արարատ» (ԲԽ043) խաղի մասին.
   Հանդիպումը սկսվել է 15 րոպե ուշացումով, «Արարատ» ՖԱ-ի՝ խաղին ուշ ներկայանալու պատճառով:

5. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղի մասին. Հանդիպման ավարտից հետո, «ՖԱ Գանձասար-Կապանի» մարզական տնօրեն Սարգիս Ասոյանը հանդերձարանների մուտքի մոտ տարաբնույթ հայհոյանքներ էր հնչեցնում «ՈՒրարտու» թիմի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Գրիգորյանի հասցեին: Սարգիս Ասոյանն ընդգրկված չէր հանդիպման արձանագրության մեջ և իրավունք չուներ գտնվելու հանդերձարանների մոտ:

6. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղի մասին. Հանդիպման առաջին խաղակեսի միջնամասից սկսած «ՖԱ Ուրարտու» ակումբի սեփականատեր Ջևան Չելոյանցը դժգոհում էր գլխավոր մրցավարի գործողություններից՝ ամեն որոշմանը շատ բուռն արձագանքելով: Մինչ հյուրերի առաջին խփած գոլը, երկրորդ խաղակեսի սկզբում, պարոն Չելոյանցը «ՖԱ ՈՒրարտուի» գլխավոր մարզիչ Ալեքսանդր Գրիգորյանին ՎԻՊ գոտուց հրամայում էր թիմը հեռացնել խաղադաշտից և չշարունակել հանդիպումը, ասելով, թե այս ամենը կլոունադա է: Իսկ գոլից անմիջապես հետո, երբ Ալեքսանդր Գրիգորյանը

ստացավ կարմիր քարտ և հեռացվեց խաղադաշտից, պարոն Չելոյանցը պնդում էր, որպեսզի թիմն անմիջապես լքի խաղադաշտը և գնա հանդերձարան, ինչի արդյունքում հյուրերի ֆուտբոլիստները մոտ 3,5 րոպե անորոշության մեջ սպասում էին իրենց ղեկավարի որոշմանը: Սակայն, երբ հեռացումից հետո Գրիգորյանը բարձրացավ ՎԻՊ գոտի, Չելոյանցի հետ խոսելուց հետո, հրահանգեց թիմին շարունակել հանդիպումը: Պարոն Չելոյանցը, լքելով ՎԻՊ գոտին և մարզադաշտը, անվայել հայհոյանքներ էր հնչեցնում:

7. 25/10/20թ. «Վան»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ041) խաղի մասին. Հանդիպման ողջ ընթացքում մարզադաշտ էին մտնում երկրպագուներ՝ հյուրերի բեյջերով, իսկ արդեն երկրորդ խաղակեսի միջնամասում՝ նաև արդեն առանց բեյջերի: Մարզադաշտում գտնվողների մեծամասնությունը չէր կրում դիմակ և չէր պահպանում սոցիալական հեռավորություն: Հանդիպման 62-րդ րոպեին, դժգոհելով գլխավոր մրցավարի գործողություններից՝ «ՖԱ Վան» ակումբի նախագահ Կարեն Բարսեղյանը սկսեց վիրավորական արտահայտություններ հնչեցնել Զավեն Հովհաննիսյանի հասցեին: Հանդիպման ավարտից հետո Կարեն Բարսեղյանը ցանկանում էր մտնել մրցավարների սենյակ:
8. 28/10/20թ. «Վեստ Արմենիա»-«Շիրակ-2» (ԱԽ053) խաղին «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Վարդգես Հարությունյանի (N 25000) հեռացման մասին. (վիրավորական արտահայտություն մրցավարի հանդեպ)

1. 22/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Լոռի ՖԱ» (ԲԽ015) խաղի մասին

Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ակումբի մարզական տնօրեն Արսեն Մարգարյանը առաջին խաղակեսի ավարտից հետո՝ թունել մուտք գործելուց առաջ, վիրավորական արտահայտություններ թույլ տվեց մրցավարական անձնակազմի հասցեին, ինչի արդյունքում տեղի ունեցավ միջադեպ նրա և 4-րդ պաշտոնյայի միջև:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 22/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Լոռի ՖԱ» (ԲԽ015) խաղին, Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ակումբի մարզական տնօրեն Արսեն Մարգարյանի կողմից մրցավարական անձնակազմի հասցեին, վիրավորական արտահայտություններ հնչեցնելու համար, Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ-ին տուգանել 200000 ՀՀ դրամի չափով՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 39-րդ կետի համաձայն:

2. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղին «ՈՒրարտու» թիմի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Գրիգորյանի (N 36106) հեռացման մասին. մրցակից թիմի հասցեին անհարգալից արտահայտություններ հնչեցնելու համար

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղին «ՈՒրարտու» թիմի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Գրիգորյանի (N 36106) հեռացման (մրցակից թիմի հասցեին անհարգալից արտահայտություններ հնչեցնելու) համար, մարզիչ

Ալեքսանդր Գրիգորյանին որակազրկել 1 խաղով, «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել 250000 ՀՀ դրամի չափով՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն:

3. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղի մասին. «Գանձասար-Կապան» թիմի մարզիչ Մարտիկ Մկրտումյանի (N 1973) հեռացման (մրցակից թիմի գլխավոր մարզչի հասցեին հայհոյանք հնչեցնելու համար)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղին «Գանձասար-Կապան» թիմի մարզիչ Մարտիկ Մկրտումյանի (N 1973) հեռացման (մրցակից թիմի գլխավոր մարզչի հասցեին հայհոյանք հնչեցնելու) համար, մարզիչ Մարտիկ Մկրտումյանին որակազրկել 1 խաղով, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 250000 ՀՀ դրամի չափով՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն:

4. 26/10/20թ. «Լոռի ՖԱ»-«Արարատ» (ԲԽ043) խաղի մասին (հանդիպումը սկսվել է 15 րոպե ուշացումով, Արարատ ՖԱ-ի՝ խաղին ուշ ներկայանալու պատճառով):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

4. 26/10/20թ. «Լոռի ՖԱ»-«Արարատ» (ԲԽ043) խաղին («Արարատ» ՖԱ-ի՝ խաղին ուշ ներկայանալու պատճառով հանդիպումը 15 րոպե ուշացումով սկսելու համար), «Արարատ» ՖԱ-ին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 43-րդ կետի համաձայն:

5. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղի մասին.

Հանդիպման ավարտից հետո, «ՖԱ Գանձասար-Կապանի» մարզական տնօրեն Սարգիս Ասոյանը հանդերձարանների մուտքի մոտ տարաբնույթ հայհոյանքներ էր հնչեցնում Ալեքսանդր Գրիգորյանի հասցեին: Սարգիս Ասոյանն ընդգրկված չէր հանդիպման արձանագրության մեջ և իրավունք չուներ գտնվելու հանդերձարանների մոտ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

5. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղին տեղի ունեցած վերոնշյալ միջադեպերի համար, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 250000 ՀՀ դրամի չափով՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն:

6. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղի մասին.

Հանդիպման առաջին խաղակեսի միջնամասից սկսած «ՖԱ Ուրարտու» ակումբի սեփականատեր Ջևան Չելոյանցը դժգոհում էր գլխավոր մրցավարի գործողություններից՝ ամեն որոշմանը շատ բուռն արձագանքելով: Մինչ հյուրերի

առաջին խփած գոլը, երկրորդ խաղակեսի սկզբում, պարոն Չելոյանցը «ՖԱ Ուրարտուի» գլխավոր մարզիչ Ալեքսանդր Գրիգորյանին ՎԻՊ գոտուց հրամայում էր թիմը հեռացնել խաղադաշտից և չշարունակել հանդիպումը, ասելով, թե այս ամենը կլոունադա է: Իսկ գոլից անմիջապես հետո, երբ Ալեքսանդր Գրիգորյանը իր պահվածքի համար ստացավ կարմիր քարտ և հեռացվեց խաղադաշտից, պարոն Չելոյանցը պնդում էր, որպեսզի թիմն անմիջապես լքի խաղադաշտը և գնա հանդերձարան, ինչի արդյունքում հյուրերի ֆուտբոլիստները մոտ 3,5 րոպե անորոշության մեջ սպասում էին իրենց ղեկավարի որոշմանը: Սակայն, երբ հեռացումից հետո Գրիգորյանը բարձրացավ ՎԻՊ գոտի, Չելոյանցի հետ խոսելուց հետո, հրահանգեց թիմին շարունակել հանդիպումը: Պարոն Չելոյանցը, լքելով ՎԻՊ գոտին և մարզադաշտը, անվայել հայհոյանքներ էր հնչեցնում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

6. 26/10/20թ. «Գանձասար-Կապան»-«ՈՒրարտու» (ԲԽ042) խաղին տեղի ունեցած վերոնշյալ միջադեպերի համար, «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել 250000 ՀՀ դրամի չափով, «ՖԱ Ուրարտու» ակումբի սեփականատեր Ջևան Չելոյանցին որակազրկել 3 խաղով, որից 2-ը պայմանական՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 37-րդ կետի համաձայն:

7. 25/10/20թ. «Վան»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ041) խաղի մասին.

Հանդիպման ողջ ընթացքում մարզադաշտ էին մտնում երկրպագուներ՝ հյուրերի բեյջերով, իսկ արդեն երկրորդ խաղակեսի միջնամասում՝ նաև արդեն առանց բեյջերի: Մարզադաշտում գտնվողների մեծամասնությունը չէր կրում դիմակ և չէր պահպանում սոցիալական հեռավորություն: Հանդիպման 62-րդ րոպեին, դժգոհելով գլխավոր մրցավարի գործողություններից՝ «ՖԱ Վան» ակումբի նախագահ Կարեն Բարսեղյանը սկսեց վիրավորական արտահայտություններ հնչեցնել մրցավար Զավեն Հովհաննիսյանի հասցեին: Հանդիպման ավարտից հետո Կարեն Բարսեղյանը ցանկանում էր մտնել մրցավարների սենյակ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

7. 25/10/20թ. «Վան»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ041) խաղին տեղի ունեցած վերոնշյալ միջադեպի, ինչպես նաև 2020-21 մրցաշրջանի ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կորոնավիրուսի կանխարգելման քայլերի ուղեցույցի դրույթները խախտելու համար, «ՖԱ Վան ՀԿ»-ին տուգանել 300000 ՀՀ դրամի չափով՝ «ՖԱ Վան» ակումբի նախագահ Կարեն Բարսեղյանին որակազրկել 3 խաղով, որից 2-ը պայմանական՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 39-րդ և 65-րդ կետերի համաձայն:

8. 28/10/20թ. «Վեստ Արմենիա»-«Շիրակ-2» (ԱԽ053) խաղին «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Վարդգես Հարությունյանի (N 25000) հեռացման մասին (վիրավորական արտահայտություն մրցավարի հանդեպ):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

8. 28/10/20թ. «Վեստ Արմենիա»-«Շիրակ-2» (ԱԽ053) խաղին «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Վարդգես Հարությունյանի (N 25000) հեռացման համար, ֆուտբոլիստ Վարդգես Հարությունյանին որակազրկել 2 խաղով, «Շիրակ» ՖԱ-ին տուգանել 50000 ՀՀ դրամի չափով՝ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 39-րդ կետի համաձայն:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի համաձայն Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: